

ՀՀ կրթության և գիտության նախարարի

17.07.2012թ. N709 Ա/Ք հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

(10-11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

(10-11-ՐԴ դասարաններ)

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«Չայոց եկեղեցու պատմություն» առարկայի ավագ դպրոցի չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել «Կրթության մասին» և «Չանրակրթության մասին» ՀՀ օրենքները, Չանրակրթության պետական չափորոշչի հայեցակարգային դրույթները, սկզբունքներն ու պահանջները:

Չայոց եկեղեցու պատմության չափորոշիչը ներառում է՝

- առարկայի հայեցակարգը
- առարկայի ուսումնական նպատակները
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը
- ուսումնական գործունեության տեսակները
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները, ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ մակարդակներով, որոնք համապատասխանում են՝ Ա - նվազագույն, Բ - միջին, Գ - բարձր պատրաստվածությանը
- գրականության ցանկը

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Առարկայի ընդհանուր նպատակները և խնդիրները

Հայ Առաքելական եկեղեցու պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում պայմանավորված է աճող սերնդի սոցիալ-հումանիտար կրթությունը լրացնելու, նոր սոցիոնշակութային պայմաններում աշխարհիկ դպրոցում դաստիարակչական գործառույթների զարգացման մանկավարժական պահանջներով, ինչպես նաև կրթական համակարգում ուսուցման հոգևոր-բարոյական հիքերը վերականգնելու ձգտումներով:

Ներկայումս հայկական կրթական համակարգի զարգացման առանձնահատկություններն են արդիականացումը և բարեփոխումը, որոնք կապված են վերջին տարիներին հայ հասարակական կյանքում տեղի ունեցած հոգևոր, սոցիալ-քաղաքական և տնտեսական խոշոր փոփոխությունների հետ: Այդ արդիականացման և բարեփոխումների ուղղություններից է լրացնել կրթության սոցիալական-մարդասիրական բովանդակությունը, որի նպատակն է մասնավորապես վերացնել պետաաշխարհիկ դպրոցի ավանդական հոգևոր-ազգային մշակույթից հրաժարվելու նախընթաց շրջանի հետևանքները: Հայ հոգևոր-մշակութային, հոգևոր-ազգային արժեքները ձևավորվել են նաև Հայոց եկեղեցու ազդեցության և մասնակցության պայմաններում, դրանք խորապես կապված են Հայ Առաքելական դավանանքի հետ: Հետևաբար Հայոց եկեղեցու պատմությունը աճող սերնդի համար կարևոր նշանակություն ունի սոցիալական-մարդասիրական գիտելիքներ ձեռք բերելու և այդ արժեքներին հաղորդակցվելու առումով:

Աճող սերնդի հաղորդակցությունը ավանդական հոգևոր-ազգային արժեքներին իրականացվում է բոլոր քաղաքակիրթ երկրների կրթական պրակտիկայում: ՀՀ Կրթակարգի, որը ձևավորվել է հայ հասարակության կրթությանն ուղղված սոցիալական պատվերի հիման վրա, պահանջներից է, մասնավորապես, որ միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտը «գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը...» (5-րդ բաժին, բ կետ), «իմանա իր իրավունքներն ու պարտականություններն, լինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի» (5-րդ բաժին, է կետ): Այս պահանջները հիմնավորում են Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրման կարևորությունը և նշանակությունը արդի հանրակրթական դպրոցում:

Քրիստոնեությունը, որպես համաշխարհային, համամարդկային կրոն, որպես գաղափարաարժեքային համակարգ և վարդապետություն, տարածվելուց հետո դարձել է քրիստոնեական ազգերի պատմական զարգացման անկապտելի մասը, իսկ հաճախ նաև՝ հասարակական և ազգային գիտակցության առանցքն ու հենքը: Քրիստոնեությունն առանձնահատուկ դեր է խաղացել Հայոց պատմության մեջ, ինչն անխզելիորեն կապված է Հայ առաքելական եկեղեցու հետ: Հայոց եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ ժողովրդի ազգային նկարագրի անբաժանելի մասը:

Հայոց պատմության մեջ Հայ Առաքելական եկեղեցու դերը բացառիկ է: Վիթխարի է նրա ներդրումը հայոց հոգևոր, կրթամշակութային արժեքների ձևավորման և պահպանման, հայոց պետականության ամրապնդման և զարգացման, ազգապահպանության գործում:

Հայ ժողովրդի ազգային-հոգևոր կառույց լինելով հանդերձ՝ Հայոց եկեղեցին միաժամանակ քրիստոնեական ընդհանրական եկեղեցու մի մասն է և արժեհամակարգային բազմաթիվ ընդհանրություններ ունի քրիստոնեական համամարդկային հիմնարար արժեքների (ազատություն, արդարություն, հանդուրժողականություն, հարգանք առ մերձավորը...) հետ:

Դասընթացի նպատակն է՝ ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը:

Այս խնդիրն առանձնակի կարևորություն ունի նաև նոր սերնդին ընդհանուր բարոյական արժեքները և հասկացությունները փոխանցելու առումով, քանի որ ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում եկեղեցին համամարդկային արժեքներ կրող կարևորագույն ինստիտուտ է: Հետևաբար, դասընթացն իր կարևոր նպաստը կբերի սովորողների ընդհանուր աշխարհայացքի, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետություն են մուտք գործել տոտալիտար, դեստրուկտիվ (ամբողջատիրական, քայքայիչ, ապակառուցողական), միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատված կրոնական տարաբնույթ հոսանքներ, որոնք լուրջ նկրտումներ ունեն հանրակրթական ոլորտ ներթափանցելու և այստեղ արմատավորվելու:

Դասընթացի նպատակն է նաև աճող սերնդին հեռու պահել վերոնշյալ բացասական երևույթներից:

Հայաստանի անկախացումից հետո հասարակության մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ Հայոց եկեղեցու պատմության, նրա կառույցի, դավանանքի և ընդհանրապես կրոնի ոլորտի նկատմամբ: Հանրակրթական որոշ հաստատություններում տարերայնորեն ներդրվեցին զանազան ծրագրեր (Հայ Առաքելական եկեղեցու պատ-

մութուն, Կրոնի պատմություն, Կրոնագիտություն և այլն), որոնք ապահովված չէին որակյալ և անհրաժեշտ ծրագրերով ու դասագրքերով, դասընթացները պետականորեն չէին սպասարկվում:

Դասընթացի նպատակն է՝ այս ոլորտում մշակել գիտամանկավարժական այնպիսի մոտեցումներ, որոնց հիմքում ընկած են մանկավարժության հիմնարար սկզբունքները՝ մատչելիություն, շարունակականություն, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, ինտեգրում այլ առարկաների հետ և այլն:

Հայագիտական առարկաների՝ հայոց պատմության, հայոց լեզվի, հայ գրականության դասավանդումը, և սովորողի կողմից դրանց ամբողջական ընկալումն առանց Հայոց եկեղեցու պատմության իմացության՝ որոշ առումով մնում է թերի:

Դասընթացի նպատակն է՝ ամբողջացնել հայագիտական առարկաների՝ հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ անրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները:

Հայ ժողովուրդն ավանդաբար և պետականորեն յուրաքանչյուր տարի նշել և հիմա էլ նշում է ավելի քան երկու տասնյակ տոներ: Այս դասընթացը կօգնի սովորողին հասկանալու այդ տոների և արարողությունների ազգային-եկեղեցական, պատմական և դաստիարակչական իմաստը:

Դասընթացը կօգնի նաև ստուգաբանել մեր կյանքի ու կենցաղի բազմաթիվ հարցեր, որոնց բացատրությունը կապված է ազգային-եկեղեցական ավանդույթների հետ:

Հայաստանի Հանրապետությունն ընդգրկված է համաշխարհային քաղաքակրթական նշանակություն ունեցող այնպիսի խոշոր գործընթացների մեջ, որոնց ազդեցությունն ակնհայտ է մշակույթի և հոգևոր-բարոյական հարցերի բնագավառում:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան կօգնի ընկալելու արևմտյան, մասնավորապես համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ:

Սկզբունքները

Առարկայի մշակման հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը ներկայացվող դասընթացի բովանդակության շրջանակներում հանդիսանում է աշխարհիկ կրթություն՝ կոնկրետ էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ: Դասընթացը կազմված է գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների՝ նյութի մատչելիություն, տարիքային համապատաս-

խանութիւն, գիտամեթոդական բազմազանութիւն, պահանջներին համապատասխան:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առարկայի ուսումնական նպատակներն ըստ հանրակրթական դպրոցի աստիճանների

Հայոց եկեղեցու պատմութիւնն դասընթացի մշակման և այն հանրակրթական դպրոցում ներդնելու գործընթացի պրակտիկ փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ կիրառված մոդելը հիմնականում համապատասխանում է առարկայի ընդհանուր նպատակներին և դաստիարակչական գործառնությունների նախատեսված պահանջներին: Ըստ այդմ՝ առարկայի նպատակներն են սովորողին

Ավագ դպրոց

- Սովորողի մոտ ձևավորել մշակութաբանական գիտելիքներ հայոց ավանդական արժեքների, հոգևոր ազգային մշակույթի վերաբերյալ,
- հոգևոր ազգային մշակույթի պատմական տարածության մեջ նպաստել անհատի ինտեգրմանը, որը կնպաստի նրա պատմական գիտակցության ձևավորմանը,
- սովորողի մոտ դաստիարակել հարգանք նախնիների, հայրենիքի պատմական անցյալի նկատմամբ,
- ձևավորել աշակերտի մեջ հարգանք, բարեխիղճ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ,
- նպաստել աճող սերնդի հոգևոր ազգային, բարոյական նկարագրի ձևավորմանը,
- միջնակարգ դպրոցի սովորողներին պատրաստել հետագայում հայագիտական կրթություն ստանալու և համապատասխան մասնագետ դառնալու ուղղությամբ:

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

X ԴԱՍԱՐԱՆ

(34 ժամ)

Ներածություն

ԹԵՄԱ I. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բարոյականության վերաբերյալ պատկերացումները մինչքրիստոնեական աշխարհում

Հասկացություն բարոյականության մասին, բարոյականություն և բարոյագիտություն: Տասը պատվիրաններ:

Քրիստոնեական բարոյագիտություն

Քրիստոնեությունը և նախորդ շրջանի բարոյագիտությունը, բարոյագիտության քրիստոնեական ուսմունքը:

ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրիստոնեական իդեալ

Հավատ, հույս, սեր:

Մարդ -անհատի դերը և առաքելությունը

Կյանքի իմաստը, երկու տեսակետ, «ես այն գիտեմ, որ ոչինչ գիտեմ», ո՞վ է մարդը, մարդու առաքելությունը:

Ազատ կամք և բանականություն

«Դուք ազատության կոչված եք», երկու տեսակետ, դետերմինիզմ և ինդետերմինիզմ, քրիստոնեական վարդապետությունը լուսավորում է մարդու բանականությունը, Ադամի օրինակը:

Քրիստոնեական բարոյագիտության սահմանումը

Առաքինություն և մեղք, քրիստոնեական բարոյագիտություն, բարոյական ազատություն, ամոթ, խիղճ, ինչպես հասնել բարոյական կատարելության: Բարոյական գիտակցություն:

Խոնարհություն և հպարտություն

Յոթ առաքինություններ, յոթ մոլություններ, խոնարհություն, հպարտություն:

Գթասրտություն (ողորմածություն) և ազահություն

Գթասրտություն, ինչ է ողորմածությունը, ազահություն:

Ժուժկալություն և որկրամոլություն

Ժուժկալություն, որկրամոլություն:

Ողջախոհություն և բղջախոհություն

Ինչպես դառնալ լավ նավապետ, Աստծո և իր խղճի առաջ, մարդկանց առաջ, հայրենիքի հանդեպ, ինչ է ողջախոհությունը, բղջախոհություն:

Ոսկե կանոն

«Այն ամենը, ինչ որ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց», օրինական և բարեկիրթ փոխհարաբերություններ, բարի և չար, անբարոյական կնոջ օրինակը:

Համբերություն

Բարոյագիտության վերաբերյալ տեսակետներ, հեղոնիզմ, էվդեմոնիզմ, համբերություն, հույսի սահմանումը:

Հավատարմություն

Երկու որդիների առակը, հավատարմություն, ի՞նչ է կոսմոպոլիտիզմը, ազգասիրություն, հայրենասիրություն, հայրենիքի սերը վեր է անձի շահերից:

Մարդ անհատը և եկեղեցին (փրկագործության խորհուրդը, անմահություն)

Մարդը արարչության պսակ, ո՞րն է Աստծո պատկերն ու նմանությունը, մարդը հին հույների պատկերացմամբ, եկեղեցի, Քրիստոսի գործի շարունակողն այս աշխարհում:

ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Հայոց եկեղեցու ծեսերը

Ի՞նչ է աղոթքը, պատարագ, պատրաստություն, երախայից պատարագ, հավատացելոց պատարագ, արձակում:

Հոգևոր բարեպաշտական սովորույթներ

Խաչակնքում, մոմավառություն, խնկարկություն և երկրպագություն, տնօրհներ և անդաստան, զերեզմանօրհներ և հոգեհանգիստ, մատաղ:

XI ԴԱՍԱՐԱՆ

(34 ժամ)

Ներածություն

ԹԵՄԱ I. ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ, ԱՐԺԵՔՆԵՐ

Աշխարհայացք, արժեքներ

Ինչ է աշխարհայացքը. արժեքներ:

ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ- ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը

Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի մշակման կենտրոնի ստեղծումը: Ազգային արժեքների ներառումը քրիստոնեական արժեհամակարգում: Քրիստոնեական ազգային հայեցակարգի մշակումը:

Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպման ձևերն ու սկզբունքները

Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպումը, տեսական և գործնական բնագավառներ:

Ազգային հոգևոր նկարագիր

Ազգային հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը: Ազգային հոգևոր նկարագրի կառուցվածքը:

ԹԵՄԱ III. ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

Ազգ

Ազգ հասկացությունը: Ազգը բնորոշող հիմնական հատկանիշները՝ լեզու, հոգևոր-ազգային կառույց, մշակութային ընդհանրություն, էթնիկ (ազգային) ինքնագիտակցություն, ընդհանուր հոգեկերտվածք:

Հայրենիք

Հայրենիք հասկացությունը, հայրենիք հասկացության ժամանակային-տարածքային ընդգրկումները, պատմական, ներկա, ապագայաբանական:

Հայրենասիրություն, ազգասիրություն, անձնագրիություն

Հայ զինվորականության պատվո վարքականոնը, քաջության, մարտունակության և հայրենասիրության գրավոր ու բանավոր օրինակարգավորում, ռազմիկի պատվո վարքականոն, հայերի ռազմական հատկանիշները օտարների գնահատմամբ:

Ազատություն, անկախություն, պետականություն

Ազատություն, անկախություն, պետականություն, միասնություն, արդարություն, համերաշխություն:

Ընտանիք

Ընտանիքի դերի և նշանակության վերաբերյալ պատկերացումները հայոց մեջ: Տոհմից մինչև ընտանիք: Հայկական ընտանիքը արդի ժամանակաշրջանում:

ԹԵՄԱ IV. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մշակույթը և ազգային-հոգևոր արժեքների պահպանումն ու վերարտադրությունը

Ազգային մշակույթ, կառուցվածք և գործառույթները: Մշակութային ժառանգականություն, ազգային արժեքների վերարտադրությունը: Մշակույթի էթնոպաշտպան դերը:

Փիլիսոփայություն

Փիլիսոփայական մտքի զարգացումը, քրիստոնեական ջատագովություն, նորպլատոնականություն, բնափիլիսոփայություն, հայ փիլիսոփաները հետագա դարերում:

Եկեղեցական մատենագրություն

Հայ եկեղեցական գրականության սկզբնավորումը, մեկնողական գրականություն, քարոզներ, ճառեր, ջատագովական գրականություն, հակաճառակագրականություն, սրբախոսություն, ծիսական երկեր, պատարագամատույց, ժամագիրք, Մաշտոց, տոնացույց:

Հայ պատմագրությունը V-XX դարերում

Հայ պատմագրության սկզբնավորումն ու զարգացումը, վարքագրություն, հայ պատմագրության զարգացումը, դրա բարոյադաստիարակչական և բարոյակրթական դերը:

Հայ գրչության արվեստը

Գրչության տեսակները և ձևերը, աղյուսակ գիր, տախտակագիր, երկաթագիր, բոլորագիր, շղագիր, նոտրագիր, կցագրություններ, փակգրեր, գաղափարագրեր, գրչության արվեստի սկզբնավորումը և զարգացումը:

Մանրանկարչություն

Ինչպե՞ս էր ստեղծվում ձեռագիրը, ինչո՞վ և ինչպե՞ս էին նկարագարողում միջնադարյան ծաղկողները, ինչպիսի՞ պատկերներ էին նկարվում ձեռագրերում, մանրանկարչության խորհրդաբանությունը:

Խորհրդանիշներ

Ի՞նչ է խորհրդանիշը, ազգային խորհրդանիշներ, խաչ, կեռխաչ, ութաթև կեռխաչ, այբուբեն, պատմաաշխարհագրական խորհրդանիշներ, ազգային պետական խորհրդանիշներ, զինանշան, հայկական զինանշանի մասերը, օրհներգ, դրամ:

Խաչքար

Խաչքարային արվեստի սկզբնավորումը, խաչքարը որպես արվեստի ինքնուրույն ուղղություն, խաչքարի խորհրդաբանությունը,

Ճարտարապետություն

Հայկական ճարտարապետական կառույցների ստեղծման սկզբունքները և առանձնահատկությունները: Եկեղեցաշինություն և քաղաքաշինություն: Ճարտարապետական գլուխգործոցներ:

Հայ երաժշտական մշակույթ

Ազգային երաժշտության առանձնահատկությունները, հորովելներ, պատմական երգեր, դյուցազներգեր, օրորներ, հոգևոր երաժշտություն, ձայնեղանակներ, խազագրեր, տաղեր, գանձեր:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ

10-11-րդ դասարաններ

Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

Ավագ դպրոցի շրջանավարտը ուսումնառության արդյունքում պետք է՝

ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ
<p>Իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> «Բարոյագիտություն» հասկացության վերաբերյալ մինչքրիստոնեական աշխարհում առկա պատկերացումները պատկերացումներ ունենա քրիստոնեական բարոյագիտության հիմնական հասկացությունների վերաբերյալ, նախնական գիտելիքներ ունենա Հայոց եկեղեցու ծեսերի և բարեպաշտական սովորույթների մասին <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> ներկայացնել և բացատրել Հայոց եկեղեցու ծեսերը և բարեպաշտական սովորույթներ 	<p>Իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> մինչքրիստոնեական բարոյագիտության հիմնական ուղղությունների, դրանց հեղինակների մասին քրիստոնեական արժեքների, մարդու և հասարակության փոխհարաբերությունների, Հայոց եկեղեցու յոթ առաքինությունների և յոթ մոլությունների մասին <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> մեկնաբանել Հայոց եկեղեցու ծեսերի, բարեպաշտական սովորույթների իմաստը և խորհուրդը 	<p>Իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> բարոյական նորմերի անհրաժեշտության նշանակությունը հասարակական հարաբերությունների կարգավորման գործում, <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> վերլուծել քրիստոնեական բարոյագիտության հիմնարար արժեքները, որպես անհատի բարոյական նկարագրի ձևավորման սկզբունք գնահատել և արժևորել ազգային-հոգևոր ավանդույթների դերն ու նշանակությունը հոգևոր-ազգային նկարագիրը պահպանելու գործում

ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ
<p>• Իմանա՝ «աշխարհընկալում», «աշխարհայացք» և «արժեքներ» հասկացությունները</p> <p>• քրիստոնեական ազգային արժեհամակարգի պատմական գործընթացի, ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման մասին</p> <p>• որոշակի պատկերացումներ ունենա «ազգ», «հայրենիք», «ազատություն», «անկախ պետականություն», «ընտանիք» հասկացությունների վերաբերյալ,</p> <p>Կարողանա՝</p> <p>• ներկայացնել և բացատրել քրիստոնեական ազգային մշակույթի հիմնական ուղղություններին:</p>	<p>• Իմանա՝</p> <p>• աշխարհայացքի, ազգային արժեհամակարգի ձևավորման մասին,</p> <p>• քրիստոնեական ազգային արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունները</p> <p>• ազգային հիմնարար արժեքների բաղադրատարրերը, դրանց նշանակությունը,</p> <p>Կարողանա՝</p> <p>• մեկնաբանել քրիստոնեական-ազգային մշակույթի առանձնահատկությունները և բնորոշ գծերը</p>	<p>• Իմանա՝</p> <p>• քրիստոնեական-ազգային արժեհամակարգի, հիմնական բաղադրատարրերի կարևորությունը և դրանց նշանակությունը ազգային-հոգևոր նկարագրի պահպանման գործում,</p> <p>Կարողանա՝</p> <p>• վերլուծել աշխարհայացքի և ազգային արժեքների ձևավորման գործընթացը</p> <p>• մեկնաբանել ազգային հիմնարար արժեքները պահպանելու կարևորությունը անկախ պետականության պայմաններում</p> <p>• գնահատել մշակույթի, որպես ազգային-հոգևոր արժեքները պահպանելու գործառույթային նշանակությունը</p>

ԱՈՍՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ
<p>Կարողանա՝</p> <p>Պաշտպանել ազգային եկեղեցու իրավունքները և պարտականությունները,</p> <ul style="list-style-type: none"> • հարգել այլոց կրոնական ընտրության իրավունքը, • պատմա-համեմատական վերլուծությաններ կատարել հայ և մյուս ժողովուրդների հիմնարար արժեքների միջև, • պաշտպանել սեփական իրավունքները և շահերը, • բացատրել ազգային խորհրդանիշները, • խուսափել տարաբնույթ, տոտալիտար և միջազգային հանրության կողմից դատապարտված աղանդավորական շարժումներից, • հասկանալ Հայոց եկեղեցու առջև ծառայած խնդիրները: 	<p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> • հարգել այլ ժողովուրդների կրոնը և կրոնական հավատալիքները, • ձևավորել ընկերոջ, համադասարանցու նկարագիրը, • մասնակցել ազգային-եկեղեցական արարողություններին, բացատրել դրանց իմաստը և նշանակությունը, • ներկայացնել ազգային խորհրդանիշների և մշակութային արժեքների իմաստն ու խորհուրդը, • մերժել ազգայինը և համամարդկայինը հակադրելու վերաբերյալ տեսությունները, • հանդես բերել նախաձեռնություն մշակութային կոթողներին հոգատար վերաբերմունք ձևավորելու համար: 	<p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> • ազգային արժեքները ճանաչելու միջոցով հասնել ինքնաճանաչման, • մշակութային ժառանգականության կարևորությունը գիտակցելու միջոցով հասկանալ մշակույթի դերը ազգային-հոգևոր նկարագիրը պահպանելու գործում, • աշխարհայացքային գիտելիքները կիրառել Հայոց եկեղեցու պատմությունը բացատրելու, ներկան հասկանալու նպատակով, • համեմատել ազգային և այլ ժողովուրդների մշակութային արժեքները, կատարել ընդհանրացումներ և եզրահանգումներ, • կայացնել և իրագործել ինքնատիպ և անկախ որոշումներ:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ավագ դպրոցն ավարտողը պետք է`

- Գիտակցի Աստվածաշնչի, որպես քրիստոնեության Սուրբ գրքի դերն ու նշանակությունը իր և մարդկության կյանքում,
- կարևորի ընկերական փոխհարաբերություններում ընկերների հաջողությունները,
- լինի բարի, հոգատար և ընկերասեր,
- ընդունի համակեցության կանոնները,
- սիրի մերձավորներին, հայրենակիցներին,
- սիրի ազգային-հոգևոր կառույցը,
- սիրի իր հայրենիքը, ժողովրդին և իր պատմությունը,
- ունենա բարոյական նկարագիր,
- գիտակցի քրիստոնեության դերը և նշանակությունը մարդկության պատմության մեջ,
- գիտակցի մարդու` որպես տիեզերքի ամենաաքանչելի ստեղծագործության դերը, հարգի մարդու և քաղաքացու իրավունքները, պայքարի դրանց պահպանման համար,
- ունենա արդարության, լավատեսության զգացում,
- սիրի Մայր եկեղեցին` նրա պատմությունը, ստեղծած արժեքները,
- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքին,
- ընդունի ժողովուրդների կրոնների գոյություն ունեցող տարբերությունները և հարգալից վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների մշակույթի հանդեպ,
- գիտակցի քրիստոնեական-բարոյական արժեքները պահպանելու կարևորությունը,
- լինի քրիստոնեական-բարոյական արժեքների կրողը,
- գիտակցի ազգային-հոգևոր կառույցի դերը և նշանակությունը իր և իր ժողովրդի կյանքում,
- գիտակցի ազգային ավանդույթներին և նորմերին հետևելու անհրաժեշտությունը,
- լինի իր նախնիների ստեղծած հոգևոր արժեքների կրողը,
- լինի հպարտ իր ժողովրդից ստացած ժառանգությամբ,
- գիտակցի անձնական, խմբային և պետական շահերի ներդաշնակեցման անհրաժեշտությունը:

Ուսումնական գործուհեոիթՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Հայոց եկեղեցու պատմության» դասընթացը և՛ հիմնական, և՛ ավագ դպրոցում բաղկացած է տեսությունից, գործնական աշխատանքներից, ցուցադրումներից (էքսկուրսիաներից):

Բոլոր հոսքերի համար տրվում են գործնական աշխատանքների, ցուցադրումների, ինչպես նաև հանձնարարելի և ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված գրականության ցանկեր (էլեկտրոնային գրադարաններ):

Բոլոր հոսքերում հանձնարարվում է վերլուծել տեսական բնույթի խնդիրներ, քննարկել առօրյա կյանքից վերցված օրինակներ, որոնց հիման վրա արվող ընդհանրացումները, քննարկումները և գնահատումները մեծապես կնպաստեն սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը և տրամաբանական մտածողության ձևավորմանը:

Դասընթացում կարևորվում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործումը ինչպես տարբեր պատմական, կրոնական երևույթները համակողմանի ընկալելու, այնպես էլ ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակցվելու առումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

2. Կրթության մասին ՀՀ օրենքը:
3. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:
4. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2010:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Սկզբնաղբյուրներ

5. Աստվածաշունչ
6. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983
7. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987
8. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981
9. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989
10. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981
11. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982
12. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Երևան, 198
13. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971
14. Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991
15. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982
16. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986
17. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Անթիլիաս, 1977 /կամ ցանկացած հրատարակություն/
18. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., Հայաստան, 1969:
19. Ղևոնդ, Պատմություն, Եր., Սովետական գրող, 1982:
20. Կարապետ Պալաթեցի, Ապաշխարություն, Ս.Էջմիածին, 1996Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության, Երևան Նաիրի, 2002 /կամ ցանկացած հրատարակություն/
21. Ս.Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991
22. Ղավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
23. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1964:
24. Մխիթար Գոշ, Ղատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:
25. Կանոնագիրք Հայոց, հ.Ա, Եր., 1964, հ.Բ, Եր., 1971:

Բ. Ուսումնասիրություններ

Հայերեն

26. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Եր., 2002:
27. Մանկական քրիստոնեական հանրագիտարան, Եր. Արեգ, 1998
28. Վազգեն վարդապետ Պալճյան, Մեր պատարագը, Բուխարեստ, 1945, Ս.Էջմիածին, 1989

29. Գանձասար, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, հհ. Ա - Ե.:
30. Սուսայեյան Կ., 12 ճանապարհորդություն դարերի խորքը, Եր., 1990:
31. Խաչատրյան Հ., Հանրագիտակ, 1990, 1991:
32. Ավագյան Է., Կորած գաղտնիք, Եր., 1990:
33. Աբրահամ վարդ. Մկրտչյան, Նախաշավիղ քրիստոնեական կրթության, Ուլուբաբյան Բ. Ա., Զրուցարան, Եր., Արևիկ, 1987:
34. Ս. Էջմիածին, 1990:
- 35.
36. Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցի, Խրատի թանգարան, Էջմիածին, 1999
37. Բառարան Սուրբ գրոց, Երևան, Ապոլոն, 1992
38. Արշակ տեր Միքայելյան, Հայաստանյայց Սուրբ եկեղեցու քրիստոնեականը, Էջմիածին, 2007
39. Քրիստոնեական, Գանձասար, Երևան, 1994
40. Եզնիկ վրդպ. Պետրոսյան, Հայոց եկեղեցու պատմություն, մաս Ա, Էջմիածին, 1998
41. Եզնիկ վրդպ. Պետրոսյան, Նոր Կտակարանի ներածություն, Էջմիածին, 1996
42. Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, հտ. 1-2, Կ. Պոլիս, 1912-1913, հտ. 3, Երուսաղեմ, 1927 կամ հհ. 1-3, Ս. Էջմիածին, 2001:
43. Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992
44. Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը և ներկա կացությունը, Մոնրեալ, 2001
45. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան 1992
46. Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Երկեր, Երևանի համալս. հրատ., Եր., 1992
47. Վարդանյան Ռ., Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Եր., 1999:
48. Հայոց Եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ. Մաթևոսյանը, Ս. Էջմիածին, 1999:
49. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001:
50. Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա, Ս. Էջմիածին, 1998:
51. Սեպուհ վարդապետ Սարգսյան, Հայոց եկեղեցու խորհուրդներն ու ծեսերը, Գանձասար, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, հհ. Ա, 1992, Բ, 1992:
52. Քրիստոնեական, կրոնի դասագիրք, Ժ տարի, Գանձասար, մատենաշար, Ս. Էջմիածին, 2002:
53. Տոն Ծննդյան և Աստվածհայտնության, Ս. Էջմիածին, 1999:
54. Կարապետ Պալաթեցի, Ապաշխարություն, Ս. Էջմիածին, 1996:
55. Զաքարիա Չազեցի և Մովսես Քերթոզ, Աստվածամոր վերափոխման և նրա պատկերի մասին, Ս. Էջմիածին, 1997:
56. Հոգեթով պատմվածքներ, հ. Բ, Անթիլիա 1985:
57. Ս. Խաչատրյան, Եզնիկ Կողբացին կամքի ազատության մասին, Եր., 2003:
58. Շնորհք արքեպս. Գալուստեան, Հայագգի սուրբեր, Երևան, 1997
59. Շնորհք արքեպս. Գալուստեան, Աստվածաշունչական սուրբեր, Երևան, 1997
60. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Եր., Հայաստան, 2000:

- 61.
62. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Երևան, 2001
63. Հայկական վարքեր և վկայաբնություններ 5-15-րդ դդ., Երևան, Նաիրի, 1998
64. Վազգեն վրդայ. Պալճյան, Մեր պատարագը, Ս. Էջմիածին, 1989 //կամ ցանկացած հրատարակություն/
65. Գանձասար, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, հհ Ա-Ե
66. Ժամանակակից աղանդները Հայաստանում, Էջմիածին, 2000
67. Արտակ արքեպս. Մանուկյան, Հայ եկեղեցու տոները, Թեհրան, նաիրի, 1984
68. Խառատյան-Առաքելյան Հրանուշ, Հայ ժողովրդական տոները, Երևան, Հայաստան, 2000
69. Գայանե Անտոնյան, Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր, Վանաձոր 2005
70. Շահե արքեպս. Գասպարյան, Տեսական աստվածաբանություն, Անթիլիաս, Լիբանան, 2000
71. Մաթևոսյան Ռ. Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձիք, Էջմիածին, 1999
72. Վարդանյան Ռ. Հայոց տոնացույցը /4-18-րդ դարեր/ Երևան, 1999
73. Հ.Գ. Ժամկոչյան, Ա.Գ. Աբրահամյան, Ս.Տ Մելիք-Բախշյան, Ս.Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1975, /սկզբից մինչև 18-րդ դարի վերջը/
74. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, V-XVIIIդդ., Երևան, 1976
75. Հայ ժողովրդի պատմություն 1- 6- րդ հատ. /ՀՍՍՀ ԳԱ հրատ/.
76. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Եր., 1981:
77. Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը, Երևան, 1992:
78. Հայաստանի միջնադարյան կթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, կազմող՝ Ա.Շահինյան, Երևան, 1984:
79. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Եր., 1974-1987:
80. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001:
81. Ռ.Մաթևոսյան, Հայկական զինանշաններ, Երևան, 1994:
82. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Եր., 1981:
83. Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը, Երևան, 1992:
84. Հայաստանի միջնադարյան կթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, կազմող՝ Ա.Շահինյան, Երևան, 1984:
85. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Եր., 1974-1987:
86. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001:
87. Ռ.Մաթևոսյան, Հայկական զինանշաններ, Երևան, 1994:

Ռուսերեն

88. Основы религиоведения, М., 1994.
89. Радугин А., Введение в религиоведение, М., 1996.

90. История религий. X-XI классы, пособие для учащихся общеобразовательных учебных заведений, М., Просвещение, 1997.
91. История религий, X-XI классы, пособие для учащихся общеобразовательных учебных заведений, М., Дрофа, 1997.
92. Основы религиоведения, М., 1994.
93. Радугин А., Введение в религиоведение, М., 1996.
94. Аристотель, Никомахова, Этика, Большая этика, сочинение в 4-х тт, т.4, Москва, 1984.
95. Л. Гумилев, Конец и вновь начало, Москва, 1997.
96. История религий, X-XI классы, пособие для учащихся общеобразовательных учебных заведений, М., Дрофа, 1997.
97. С. Лурье, Историческая характеристика, Ереван, 2001.
98. Л. Мелик-Шахназаров, Характер армянского народа, Ереван, 1999.
99. А. Налчаджян, Этническая характерология, Ереван, 2001.
100. Основы религиоведения, М., 1994.
101. Очерки истории этики, Под редакцией Б. Чагина, Москва, 1969.
102. Протоиерей Евгений Шестун, Православная педагогика, М., 2002.
103. Радугин А., Введение в религиоведение, М., 1996.
104. С. Хантингтон, Столкновение цивилизаций, Москва, 2003.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ
«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԾՐԱԳԻՐ
(10-11-ՐԴ դասարաններ)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Նպատակը և խնդիրները

Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 10-11-րդ դասարանների ծրագիրը կազմվել է հիմք ընդունելով «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքները, հանրակրթության պետական կրթակարգը և միջնակարգ կրթության պետական չափորոշիչը, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի միջին դպրոցի չափորոշիչը և ծրագիրը, Հի կառավարության կողմից հաստատված ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը»:

Հայոց պատմության մեջ Հայ Առաքելական եկեղեցու դերը բացառիկ է: Վիթխարի է նրա ներդրումը հայոց հոգևոր, կրթամշակութային արժեքների պահպանման, հայոց պետականության ամրապնդման և զարգացման, ազգապահպանության գործում:

Հայոց եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ ժողովրդի ազգային նկարագրի անբաժանելի մասը:

Հայ ժողովրդի ազգային-հոգևոր կառույցը լինելով հանդերձ՝ Հայոց եկեղեցին միաժամանակ քրիստոնեական ընդհանրական եկեղեցու մի մասն է և արժեհամակարգային բազմաթիվ ընդհանրություններ ունի քրիստոնեական համամարդկային հիմնարար արժեքների (ազատություն, արդարություն, հանդուրժողականություն, հարգանք առ մերձավորը...) հետ:

Դասընթացի նպատակն է՝ ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը:

Այս խնդիրն առանձնակի կարևորություն ունի նաև նոր սերնդին ընդհանուր բարոյական արժեքները և հասկացությունները փոխանցելու առումով, քանի որ ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում եկեղեցին համամարդկային արժեքներ կրող կարևորագույն ինստիտուտ է: Հետևաբար, դասընթացն իր կարևոր նպաստը կբերի սովորողների ընդհանուր աշխարհայացքի, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետություն են մուտք գործել տոտալիտար, դեստրուկտիվ (ամբողջատիրական, քայքայիչ, ապակառուցողական) միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատված կրոնական տարաբնույթ հոսանքներ, որոնք լուրջ նկրտումներ ունեն հանրակրթական ոլորտ ներթափանցելու և այստեղ արմատավորվելու:

Դասընթացի նպատակն է նաև աճող սերնդին հեռու պահել վերոնշյալ բացասական երևույթներից:

Հայաստանի անկախացումից հետո հասարակության մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ Հայոց եկեղեցու պատմության, նրա կառույցի, դավանանքի և ընդհանրապես կրոնի ոլորտի նկատմամբ: Հանրակրթական որոշ հաստատու-

թյուններում տարերայնորեն ներդրվեցին զանազան ծրագրեր (Հայ Առաքելական եկեղեցու պատմություն, Կրոնի պատմություն, Կրոնագիտություն և այլն), որոնք ապահովված չէին որակյալ և անհրաժեշտ ծրագրերով ու դասագրքերով, դասընթացները պետականորեն չէին սպասարկվում:

Դասընթացի նպատակն է՝ այս ոլորտում մշակել գիտամանկավարժական այնպիսի մոտեցումներ, որոնց հիմքում ընկած են մանկավարժության հիմնարար սկզբունքները՝ մատչելիություն, շարունակականություն, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, ինտեգրում այլ առարկաների հետ և այլն:

Հայագիտական առարկաների՝ հայոց պատմության, հայոց լեզվի, հայ գրականության դասավանդումը, և սովորողի կողմից դրանց ամբողջական ընկալումն առանց Հայոց եկեղեցու պատմության իմացության՝ որոշ առումով մնում է թերի:

Դասընթացի նպատակն է՝ ամբողջացնել հայագիտական առարկաների՝ հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները:

Հայ ժողովուրդն ավանդաբար և պետականորեն յուրաքանչյուր տարի նշել և հիմա էլ նշում է ավելի քան երկու տասնյակ տոներ: Այս դասընթացը կօգնի սովորողին հասկանալու այդ տոների և արարողությունների ազգային-եկեղեցական, պատմական և դաստիարակչական իմաստը:

Դասընթացը կօգնի նաև ստուգաբանել մեր կյանքի ու կենցաղի բազմաթիվ հարցեր, որոնց բացատրությունը կապված է ազգային-եկեղեցական ավանդույթների հետ:

Հայաստանի Հանրապետությունն ընդգրկված է համաշխարհային քաղաքակրթական նշանակություն ունեցող այնպիսի խոշոր գործընթացների մեջ, որոնց ազդեցությունն ակնհայտ է մշակույթի և հոգևոր-բարոյական հարցերի բնագավառում:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան կօգնի ընկալելու արևմտյան, մասնավորապես համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի բովանդակությունը ավագ դպրոցում ըստ դասարանների բաշխվում է հետևյալ կերպ.

- X դասարան - Քրիստոնեական բարոյագիտություն
- XI դասարան Հայոց քրիստոնեական ազգային արժեհամակարգ և մշակույթ

X- XI ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

X ԴԱՍԱՐԱՆ (34 ժամ)

Ներածություն

(1 ժամ)

ԹԵՄԱ I. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(3 ժամ)

Բարոյականության վերաբերյալ պատկերացումները մինչքրիստոնեական աշխարհում
Հասկացություն բարոյականության մասին, բարոյականություն և բարոյագիտություն: Տասը
պատվիրաններ:

Քրիստոնեական բարոյագիտություն

Քրիստոնեությունը և նախորդ շրջանի բարոյագիտությունը, բարոյագիտության քրիստո-
նեական ուսմունքը:

ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(20 ժամ)

Քրիստոնեական իդեալ

Հավատ, հույս, սեր:

Մարդ -անհատի դերը և առաքելությունը

Կյանքի իմաստը, երկու տեսակետ, «Ես այն գիտեմ, որ ոչինչ գիտեմ», ո՞վ է մարդը, մարդու
առաքելությունը:

Ազատ կամք և բանականություն

«Դուք ազատության կոչված եք», երկու տեսակետ, դետերմինիզմ և ինդետերմինիզմ,
քրիստոնեական վարդապետությունը լուսավորում է մարդու բանականությունը, Ադամի օրինակը:

Կրկնություն

(1 ժամ)

Քրիստոնեական բարոյագիտության սահմանումը

Առաքինություն և մեղք, քրիստոնեական բարոյագիտություն, բարոյական ազատություն,
ամոթ, խիղճ, ինչպես հասնել բարոյական կատարելության: Բարոյական գիտակցություն:

Խոնարհություն և հպարտություն

Յոթ առաքինություններ, յոթ մոլություններ, խոնարհություն, հպարտություն:

Գթասրտություն (ողորմածություն) և ազահություն

Գթասրտություն, ինչ է ողորմածությունը, ազահություն:

Ժուժկալություն և որկրամոլություն

Ժուժկալություն, որկրամոլություն:

Ողջախոհություն և բղջախոհություն

Ինչպես դառնալ լավ նավապետ, Աստծո և իր խղճի առաջ, մարդկանց առաջ, հայրենիքի
հանդեպ, ինչ է ողջախոհությունը, բղջախոհություն:

Ոսկե կանոն

«Այն ամենը, ինչ որ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց», օրինական և
բարեկիրք փոխհարաբերություններ, բարի և չար, անբարոյական կնոջ օրինակը:

Համբերություն

Քարոյագիտության վերաբերյալ տեսակետներ, հեղոնիզմ, էվդեմոնիզմ, համբերություն, հույսի սահմանումը:

Հավատարմություն

Երկու որդիների առակը, հավատարմություն, ի՞նչ է կոսմոպոլիտիզմը, ազգասիրություն, հայրենասիրություն, հայրենիքի սերը վեր է անձի շահերից:

Մարդ անհատը և եկեղեցին (փրկագործության խորհուրդը, անմահություն)

Մարդը արարչության պսակ, ո՞րն է Աստծո պատկերն ու նմանությունը, մարդը հին հույների պատկերացմամբ, եկեղեցի, Քրիստոսի գործի շարունակողն այս աշխարհում:

Կրկնություն (2 ժամ)

ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ (5 ժամ)

Հայոց եկեղեցու ծեսերը

Ի՞նչ է աղոթքը, պատարագ, պատրաստություն, երախայից պատարագ, հավատացելոց պատարագ, արձակում:

Հոգևոր բարեպաշտական սովորույթներ

Խաչակնքում, մոմավառություն, խնկարկություն և երկրպագություն, տնօրհներ և անդաստան, գերեզմանօրհներ և հոգեհանգիստ, մատաղ:

Կրկնություն (1 ժամ)

Ամփոփում (1 ժամ)

XI ԴԱՍԱՐԱՆ (34 ժամ)

Ներածություն (1 ժամ)

ԹԵՄԱ I. ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ, ԱՐԺԵՔՆԵՐ (2 ժամ)

Աշխարհայացք, արժեքներ

Ինչ է աշխարհայացքը. արժեքներ:

ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ- ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ (5 ժամ)

Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը

Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի մշակման կենտրոնի ստեղծումը: Ազգային արժեքների ներառումը քրիստոնեական արժեհամակարգում: Քրիստոնեական ազգային հայեցակարգի մշակումը:

Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպման ձևերն ու սկզբունքները

Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպումը, տեսական և գործնական բնագավառներ:

Ազգային հոգևոր նկարագիր

Ազգային հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը: Ազգային հոգևոր նկարագրի կառուցվածքը:

Կրկնություն (1 ժամ)

ԹԵՄԱ III. ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

(8 ժամ)

Ազգ

Ազգ հասկացությունը: Ազգը բնորոշող հիմնական հատկանիշները՝ լեզու, հոգևոր-ազգային կառույց, մշակութային ընդհանրություն, էթնիկ (ազգային) ինքնագիտակցություն, ընդհանուր հոգեկերտվածք:

Հայրենիք

Հայրենիք հասկացությունը, հայրենիք հասկացության ժամանակային-տարածքային ընդգրկումները, պատմական, ներկա, ապագայաբանական:

Հայրենասիրություն, ազգասիրություն, անձնագրիություն

Հայ զինվորականության պատվո վարքականոնը, քաջության, մարտունակության և հայրենասիրության գրավոր ու բանավոր օրինակարգավորում, ռազմիկի պատվո վարքականոն, հայերի ռազմական հատկանիշները օտարների գնահատմամբ:

Ազատություն, անկախություն, պետականություն

Ազատություն, անկախություն, պետականություն, միասնություն, արդարություն, համերաշխություն:

Ընտանիք

Ընտանիքի դերի և նշանակության վերաբերյալ պատկերացումները հայոց մեջ: Տոհմից մինչև ընտանիք: Հայկական ընտանիքը արդի ժամանակաշրջանում:

Կրկնություն

(1 ժամ)

ԹԵՄԱ IV. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

(14 ժամ)

Մշակույթը և ազգային-հոգևոր արժեքների պահպանումն ու վերարտադրությունը

Ազգային մշակույթ, կառուցվածք և գործառույթները: Մշակութային ժառանգականություն, ազգային արժեքների վերարտադրությունը: Մշակույթի էթնոպաշտպան դերը:

Փիլիսոփայություն

Փիլիսոփայական մտքի զարգացումը, քրիստոնեական ջատագովություն, նորպլատոնականություն, բնափիլիսոփայություն, հայ փիլիսոփաները հետագա դարերում:

Եկեղեցական մատենագրություն

Հայ եկեղեցական գրականության սկզբնավորումը, մեկնողական գրականություն, քարոզներ, ճառեր, ջատագովական գրականություն, հակաճառակագրականություն, սրբախոսություն, ծիսական երկեր, պատարագամատույց, ժամագիրք, Մաշտոց, տոնացույց:

Հայ պատմագրությունը V-XX դարերում

Հայ պատմագրության սկզբնավորումն ու զարգացումը, վարքագրություն, հայ պատմագրության զարգացումը, դրա բարոյադաստիարակչական և բարոյակրթական դերը:

Հայ գրչության արվեստը

Գրչության տեսակները և ձևերը, աղյուսակ գիր, տախտակագիր, երկաթագիր, բուլրագիր, շղագիր, նոտրգիր, կցագրություններ, փակգրեր, գաղափարագրեր, գրչության արվեստի սկզբնավորումը և զարգացումը:

Մանրանկարչություն

Ինչպե՞ս էր ստեղծվում ձեռագիրը, ինչո՞վ և ինչպե՞ս էին նկարագարողում միջնադարյան ծաղկողները, ինչպիսի՞ պատկերներ էին նկարվում ձեռագրերում, մանրանկարչության խորհրդաբանությունը:

Խորհրդանիշներ

Ի՞նչ է խորհրդանիշը, ազգային խորհրդանիշներ, խաչ, կեռիսաչ, ութաթև կեռիսաչ, այբուբեն, պատմաաշխարհագրական խորհրդանիշներ, ազգային պետական խորհրդանիշներ, զինանշան, հայկական զինանշանի մասերը, օրհներգ, դրամ:

Խաչքար

Խաչքարային արվեստի սկզբնավորումը, խաչքարը որպես արվեստի ինքնուրույն ուղղություն, խաչքարի խորհրդաբանությունը,

Ճարտարապետություն

Հայկական ճարտարապետական կառույցների ստեղծման սկզբունքները և առանձնահատկությունները: Եկեղեցաշինություն և քաղաքաշինություն: Ճարտարապետական գլուխգործոցներ:

Հայ երաժշտական մշակույթ

Ազգային երաժշտության առանձնահատկությունները, հորովելներ, պատմական երգեր, դյուցազներգեր, օրորներ, հոգևոր երաժշտություն, ձայնեղանակներ, խազագրեր, տաղեր, գանձեր:

Կրկնություն

(1 ժամ)

Ամփոփում

(1 ժամ)